

Յերեկն ըզվարդն շուռ կուզայ .
Գիշերն ի ներքեւ տերեւին ,
Զկանանչ տերեւն ի յետ բանայ .
Մտնու ի մէջ կարմիր թփին :

Կուզես հայիս վարդն մուրատով .
Նա եղեալ է ի զըրմղին ,
Յուր կերեւայ թուփ մի պայծառ .
Այն է հասեր իւր մուրատին :

Հաւասար գտերեւն ի շուռ երեկ .
Նատար արար ի վրայ վարդին ,
Ի մէկ տեղ չէ հասեր մուրատ .
Իւր կերեւայ թուփ մը տեղին :

Պլպուլն արար, ազան վարդին .
Արեկ մտնունք ի պաղչանին ,
Սիրու տերքն զիս կու խոցին .
Երբոր որ կուզան զվարդն տանին :

Աչնան տերեւն ի վայր թափաւ
Դառներ շիւրէր ի վրայ արնկին ,
Լայր ու աչօքըն արտասուէ ր .
Եւ անիծէր զիւր տանողին :

Յաւզն զպլպուլն արար շիւար .
Սգաւոր էր սիրտն ի փորին ,
Թէ այն վարդէն այլ չահ չկայ .
Մինչ որ դայ մէկ այլ տարին :

Ել մի եղաւ պայծառ դարուն .
Ու պլպուլին խապար բերին ,
Բուսեր հաղար թուրլու ծաղիկ .
Ըռանկ ըռանկ լուրջ ու դեղին :

Ել մի եղաւ աջող պլպուլն .
Երեկ բարեւ ետուր վարդին ,
Վարդն ինդաց ւ ուրախացաւ .
Հանդէ եկաւ իմ սիրելին :